

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 ֆր.

Վեցամսեայ 6 ֆր.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան 14 ֆր.

Վեցամսեայ 7 ֆր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 ֆր.

Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆՈՒԿ

Տարեկան 2.60 ֆր.

Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆՈՒԿ

Տարեկան 2.60 ֆր.

Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆՈՒԿ

Տարեկան 2.60 ֆր.

Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆՈՒԿ

Տարեկան 2.60 ֆր.

Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆՈՒԿ

Տարեկան 2.60 ֆր.

Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆՈՒԿ

Տարեկան 2.60 ֆր.

Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆՈՒԿ

Տարեկան 2.60 ֆր.

Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆՈՒԿ

Տարեկան 2.60 ֆր.

Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆՈՒԿ

Տարեկան 2.60 ֆր.

Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆՈՒԿ

Տարեկան 2.60 ֆր.

Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆՈՒԿ

Տարեկան 2.60 ֆր.

Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆՈՒԿ

Տարեկան 2.60 ֆր.

Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆՈՒԿ

Տարեկան 2.60 ֆր.

Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆՈՒԿ

Տարեկան 2.60 ֆր.

Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆՈՒԿ

Տարեկան 2.60 ֆր.

Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆՈՒԿ

Տարեկան 2.60 ֆր.

Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆՈՒԿ

Տարեկան 2.60 ֆր.


Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆՈՒԿ

Տարեկան 2.60 ֆր.

Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆՈՒԿ



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿՆԱ

ԿԸ ՀՐԱՏՈՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՒԵՔՇԱՔԻ ԵՒ ՇԱՔԱՔ

Ծանոցման տողը
20 սանթիմ

Գրադրույք եւ չեմ
որոշիր

ՕՐԸ ՕՐԻՆ

ՄԱՐԴ-ԳԱԶԱՆԸ

Հին դարերու պատմութեանց մէջ գիւղերու և ամբողջ քաղաքներու աւերման, հրդեհման և հազարաւոր անմեղ բնակիչներու կոտորման դէպքեր նկարագրող տողերը պատմութեան սե էջերը կանուանէինք և իբր անքաղաքակիրթ դարերու գործեր զգուանօք կը յիշէինք, որպէս հին նմոյշներ մարդկային գազանութեան: Բայց այդ մարդ-գաղանքը այսօր ալ քաղաքակիրթութեան չպարը պահ մը մէկ կողմ նետած իր չար բնազդը ի գործ կը դնէ. կայրէ, կաւերէ, կը ջարդէ և պահ մը մէկ կողմ քաջութեամբ դիւալին հրճուանքով մը կը սոնքայ ազգասիրական կամ կրօնասիրական պարտք մը կատարողի գոհունակութեամբ: Եւ այդ ամենը եթէ կը կատարուին անգիտակ տգէտ ամբոխին ձեռքով, բայց կը թելադրուին ուսեալ, զարգացած ու քաղաքակիրթ նկատուած խոյր դէմքերէ:

Եթէ Թուրքիոյ մէջ Եգիպտոս, Ալիւն և ուրիշ շատ մը քաղաքներ ու գիւղեր աւերուեցան փաշաներու և պէյերու կազմակերպած խուժանէն. այսօր կողմ կա սի մէջ Շուշին և Զանկեզուրը կաւերուին խաներու և աղալարներու առաջնորդութեամբ. ուրիշ երկիրներ նոյնանման վայրենութիւններ կը գործուին համալսարանականներու և օրէնքի պաշտպաններու այսինքն փաստաբաններու, նախկին գատաւորներու դրդմամբ. քաղաքներ ու գիւղեր աչքերնուս առջև կը միան, մարդկային անհղ զոհերու հոնդիւնները ականջնուս կը հասնին, և աղէտը կը սպառնայ վաղը մեր գոռն ալ հասնիլ, ու դեռ կըսենք թէ քաղաքակիրթ գարու մէջ կապրինք: Ո՞վ բարք ո՞վ ժամանակ...

Մեր թուներն ալ իրաւամբ մեզ ու մեր այս դարը վայրենաբար, թող կոչեն:

Սուլթան Ապտիւլ Համիտին մեռնիլը կամ առնուազն մահամերձ վիճակի մէջ գտնուիլը որոշ է այլևս, անոր կեանքը շատ ու շատ մէկ երկու ամիս կրնայ երկարիլ:

Մեզ համար խնդիր է գիտնալ թէ Սուլթան Համիտին մահը կրնայ մեզ խոստանալ նշանակելի բարիք մը:

Ըստ մեզ, այս մասին այսօրու ընէ չէ կարելի վճռակա՞ն բան մը ըսել: Սուլթանի մը փոփոխութիւնը թէ և կրնայ քաղաքական փոփոխութիւն մը յառաջ բերել. և էն հաւանականը սակայն թուի ըլլալ, թէ նոր թագաւորը ընդհանուր ներում մը չընորհէ, արտասահման գտնուող օսմանեան հպատակներուն վերադարձը արտօնէ և իբր հիմնական բարեկարգութիւն շատ շատ Միդհատեան Սահմանադրութիւնը վերականգնանցնէ որոշ սեղմումներով կամ ընդլայնումներով:

Ընդհանուր ներումը և վերադարձի արտօնութիւնը փոքր ի շատէ բարիք մը կը նկատուի մեզ համար, պայմանաւ որ երկրին մէջ ինչքի, անձի ու պատուոյ ապահովութիւն հաստատուի հիմնական բարենորոգումներ ներմուծուին: Առանց այս պայմանին ներումը և վերադարձի ազատութիւնը խաբուսիկ բաներ պիտի ըլլան, որոնց պիտի չարքան զառաջնը՝ կրնայ լինել: Բայց կարելի է միայն թուրք վարչութեան մը հիմնական բարենորոգումներ ակնկալել, Մենք այդ մասին շատ թերահաւատ ենք: Հետեւաբար Սուլթանին փոխուելուն ալ բարենորոգման հարցը կրկին ցցուած կը մնայ մեր առաջ. և այդ հարցը լուծելու եղանակներուն մէջ կարծիքի տարբերութիւնները Թուրքիան կը դնեն այն վիճակին, որուն մէջ կը գտնուի այսօր: Այսինքն երիտակարգ-թուրքերու կուսակցութիւնը սահմանադրութիւնը վերահաստատելու մէջ կը տեսնէ երկրին բարենորոգումը:

Յոյները Սերպերը, Արաբներ և ուրիշներ երկիրը բաժնելու մէջ, Բիւրտեր և ուրիշ ձրիակեր ու աւազակ ցեղեր անիշխանութեան տեւողութեանը մէջ, միայն պուլկար-մակեդոնացիները և Հայերս ենք որ շրջանակային ներքին ինքնավարութեան մէջ կը յուսանք տեսնել երկրին ապահովութիւնը և զարգացումը:

Երկրի մը բնիկ ժողովուրդեան մէջ տիրող այս հակոտնեայն պատակները ու ձգտումները անկարելի պիտի ընեն, կը կարծենք, վարչական կեդրոնացման համանման սիտեմով կառավարել կայսրութեան մէկ ծայրէն միւսը: Ամեն պարագայի մէջ ազգաբնակչան տեսակետով շրջանակներու բաժանմամբ ներքին ինքնավարութիւններ սահմանելու պէտքը պիտի տեսնուի, որպէսզի կարելի ըլլայ երկիրը խաղաղօրէն զարգացնել: Բայց թուրքերու մեծ մասը պիտի հակառակի ներքին ինքնավարութիւններ հաստատելու ձեռն: Այս պատճառաւ կրկին օտար պետութեանց միջամտութեան պէտքը անժըխտելի պիտի ըլլայ, և յեղափոխական կամ տպստամբական կազմակերպութիւնները չպիտի դադրին գործելէ, և բնականապէս կառավարութիւնն ալ չը պիտի դադրի զանոնք հալածելէ: Այսպէս պիտի տեսնուի դրութիւնը մինչև որ պետութեանց միջև համաձայնութիւն մը կայանայ Արևելքի քրիստոնեայ նահանգները իրենց հսկողութեան տակ ներքին ինքնավարութեամբ կառավարել տալու համար:

Ուրեմն կ'եզրակացնենք, Արևելքը Սուլթաններու փոփոխութեանէն աւելի պետութեանց համաձայնութեանը կը կարօտի. և այդ համաձայնութիւնը մօտ ըլլալ կը թուի մեզ: Այս կը բացատրենք ուրիշ յօդուածով մը:

ՌՈՒՍԻՈՅ ԳՈՐԾԵՐԸ

պաշտօնական
Բեդեստայուրի 24 յուլիս

Ս. Պետերպուրկի նահանգապետ Զինովիէվ մի կողմ է հրատարակել, ուղղուած ազգաբնակչութեան որի վերնագիրն է. «Ինչպէս որ սպասէ ազգաբնակչութիւնը կողաւարութիւնից և թէ ինքը՝ ազգաբնակչութիւնը ինչ է անելու», որի մէջ մատնանշուած է, որ ժողովուրդական ներկայացուցչութիւնը և բոլոր անհրաժեշտ բարենորոգումները Ռուսաստանին տրված են սոսկ կայսրի կամքով: Կայսրի տուած բարենորոգումներից մի քանիսը իրազործուեցին դեռ Դուստան գուամարելուց առաջ, իսկ մնացածների վերաբերմամբ կառավարութիւնը նախապատրաստական աշխատանքների է ձեռնարկել և ձեռնարկում է: Ոստիկանութիւնը ամենուրեք չէ խանդարել կադէտների և մասամբ էլ սօսիալիստների նախընտրական ագիտացիան: Թագաւոր կայսրը ժողովրդական ներկայացուցիչներին յարգեց «լաւ մարդիկ» կոչելով և հրաւիրեց նրանց բարոյապէս վերականգնանցներու ռուս երկիրը: Դուստան իր պատասխան ուղերձով պահանջեց փոփոխել հիմնական օրէնքները պնդելով, որ միևնույնների խորհուրդը ոչնչացվի, և կազմուի մի այնպիսի միևնույնութիւն, որ պատասխանատու լինի Դուստայի առջև, այլ ոչ թէ կայսրի առաջ, անտես առնելով, որ գլխաւոր վերանորոգումները հերթին դրված էին արդէն Թագաւոր կայսրի կամքով: Դուստան, ասես, իրան իւրացրեց նրանց՝ պատասխան ուղերձի պահանջի ձեռով: Այդ պահանջներին Դուստան աւելացրեց քաղաքական յանցաւորների լիակատար ներումն շնորհելու պահանջները: Ներումն նոյնիսկ մարդասպանին, կողոպտիչներին, մահուան պատժի վերաժումն նոյնիսկ կայսրապաշտներին և հողերը ստիպողաբար գրաւողներին: Դուստան չը ճանաչեց այն միևնույնութիւնը,

որի կաղմբու իրաւունքը—ըստ հիմնական օրէնքների—պատկանում է միմիայն թագաւոր կայսրին չը լսեց նրան մինսորներին ընդունում էր թշնամաբար, արհամարանքով, ճանապարհ էր դնում աղմուկով, սուլոցներով և վերաւորանքներով։ Ոչ մի օրէնք նա չմշակեց, բացի երկու տողից բաղկացած նախագծից—լիակատար վերացումն մահվան պատժի ոչ մի հարց չը լուծեց նա բացի 50 միլիոն փոխարէն 15 միլիոն ռուբլի յատկացնելուց մատակարարական կարիքների դէմ կռուելու համար։ Ժամանակն անցնում էր անվերջ ճառերով և Դուման, հնազանդ յեղափոխական իդէալներին—չը համարձակվեց նոյնիսկ դատաւարտել պաշտօնական և մասնաւոր քստմենի սպանութիւնները, անփաստօրէն և հաճախ քննարկով մեղադրելով կառավարութեանը—հրէական ջարդեր առաջացնելու մէջ, Դումանյի մեծամասնութիւնը լուծեամբ անցրեց հողատէրերի սոսկալի քայքայման, կողպատումների և հրճիգումների տեղեկութիւնները։ Վերջապէս Դումանյի մեծամասնութիւնը որոշում կայացրեց՝ հակառակ կառավարութեան և զանցառնելով նրան, դիմել կոչով ուղղակի ազգաբնակչութեան։ Այդօրինակ վարմունքի մէջ կարելի է տեսնել սոսկ հանցաւոր դաւաճարութիւն երգման։ Մինակ ելքը հանդիսանում էր Դումանյի արձակումը և նոր ընտրութիւններ նշանակելը։ Մինսորների խորհրդի նոր նշանակումը նախագահ Ստոլիպինը յայտարարեց, որ թագաւոր կայսրի մտադրութիւնները անդրդվելի ու անփոփոխ են։ Կառավարութիւնը հաստատապէս վճռել է փոփոխել և վերացնել իրանց զարն անցրած աննպատակաւարմար օրէնքները, Հին կաղմբ վե-

րանորոգելու և ուրեմն կարգը ևս պիտի պահպանուի համայն Ռուսաստանում, նահանգապետներին պատասխանատւութեամբ։ Յիշեցնելով ազգաբնակչութեանը նոր ընտրութիւնների մասին, նահանգապետը վերջացնում է իր կոչը, յիշեցնելով, որ Պետական Դումանյի անդումների համար հարկաւոր է ոչ թէ պէրճախօսութիւն, այլ աւելի, մտադածին խօսք։ Ոչ թէ մակերևութային գիտութիւն, այլ հիմնական և հասուն պատրաստակաւութիւն տեղական գործերում։ Ոչ թէ երկտասարդական զայրոյթ, այլ խելացիութիւն, կեանքի փորձառութիւն, հայրենիքի սէր, պատիւ, եռանդ ու հանգստութիւն։ Միայն, միմիայն բարեխիղճ ներկայացուցչութեան օրօք կիրականան կայսրի սրտի եռանդուն և վառ ցանկութիւնները՝ տեսնել իր ժողովուրդը բախտաւոր, և կը վերականգնվեն Մեծ Ռուսաստանի ներկայումս խախտված բարօրութիւնը և բարեկեցութիւնը»։

ՀԱՅԱԿԵԱՆ ԶԻՆՈՐՆԵՐԻ
ԿՈՉԸ (*)

Կովկասի հայ թերթերը յաճախ քստմենի եղբայրասպանութեան բռնաբեր լուրեր են հաղորդում մեզ։ Հ. Յ. Դաշնակցութեան մէջ գտնուող մի քանի անբարոյական ու դատարկագործ թափառաշրջիկներ օտարափելի ոճրագործութիւններ են անել տալիս իրենց տղէտ զինուորներին։ Վերջին տաւոյ ընթացքում Դարսի, Ալէքսանդրօպոլի Սիմուսի, Սալմասի, Թաւրիզի, Զանգեզուրի եւ Գորեսի մէջ անգիտօրէն կատարուած դարչելի ոճիրները որոնք հայ ժողովուրդի ու մասնաւոր հայ յեղափոխութեան ճակատին դրօշմեցին ամենամեծ նախատինքի սեւ կնիքը, տակաւին չարունակում են

[*] Քէօստէնճէի Հին Հնչակ մասնաճիւղէն մեզ զրկուած է սոյն կոչը անպատճառ հրատարակելու խնդրանքով։

անպատճառ մնալով Դաշնակցութեան հեղինակաւոր մարմինների կողմից։ Հայ հասարակութիւնից շատեր, որոնք մօտից ծանօթ չեն այդ կուսակցութեան կազմին, զարմանքով հարց են տալիս թէ ինչպէս Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը թոյլ է տալիս իրեն այդպիսի հակայեղափոխական ոճիրներ գործելու խախտել իր ընկերներին։ Սակայն այդ իրողութիւնը զարմանալի չէ մեզ համար, որ գիտենք թէ յեղափոխական կոչուած այդ կուսակցութիւնը ինչպիսի տարրերից է կազմուած։

Հայ Յեղ. Դաշնակցութիւնը ըստ երեւոյթին քաղաքական դաւանանքի տարբեր համոզումներից՝ այլ օգնական հաստական կիրքերի ու եւտամոլութեան ծնունդ լինելով՝ այդպիսի տարբեր գոյացած մի կազմակերպութիւնից յեղափոխական լուրջ ու մաքուր բան սպասելը անուազն միամտութիւն կը լինէր։ Զարմանալի չէ ուրեմն, որ յեղափոխութեան անունով դուրս եկող այդ թափառական խումբը հէնց իր գոյութեան առաջին օրերից սկսեց մի անհաշտ կռիւ։ Մղել ոչ այնքան Սուլթանի բռնակալութեան դէմ, որքան այդ բռնակալութիւնը տապալելու համար աշխատող Հնչակեանութեան դէմ։ Մայրաքաղաքում թեւեւ ողորդ անւած՝ ամեն կերպ ժողովրդական միջոցներ գործ դրեց Հին Հնչակեան կուսակցութեան գոյութիւնը ոչնչացնելու համար։ Ամեն տեղ հակահնչակեան պրօպագանդա, սուլութիւն զրպարտութիւն, խաբեքայութիւն, անւանարկութիւն ու բռնութիւն, անհա՛ որոնք են եղբւր կրկար տարիներ հնչակեանների դէմ մղուած կռուի մէջ դաշնակցական [բացառութիւն յարգելով] պրօպագանդիստի խորագրերի եւ այլ անանուն ու անպէտք ձրիակեր պաշտօնանների գործածած զէնքերը։ Իսկ հնչակեան կուսակցութիւնը միշտ արհամարանքով պատասխանեց է իր այդ հակառակորդներին։

Դաշնակցութեան այդ մանաւանդութիւնը զգալով վերջապէս բարոյական ու մտաւոր ուժերի տկարութիւնը հանդէպ իրենցից բարոյապէս ու մտաւորապէս շատ բարձր կանգնած հնչակեանութեան, ի վերջոյ Բաժնեցի իրենց անդունդի մօտ գտնուող գարշագոյթիւնը քարշ տալու համար դի-

մել կոպիտ ուժի եւ սկսեցին գործադրել վերջին միջոցը—կոտորել Հնչակեան հետնաւորներին։ Օ՛հ, ինչքան ողորմելի, նոյնքան եւ տղեղ, հակամարդկային, հակայեղափոխական, ստոր ու դատապարտելի միջոց, որը յատուկ է միայն աշխարհի ամենամեծ մարդասպանների Սուլթանի եւ Զարի՛ բռնակալ բերօղբատիւն։ Էլ ինչո՞վ են զանազանում Դաշնակցութեան այդ տեսակ գործիչները Սուլթանի եւ Զարի՛ գործակալներինց եւ նրա զինուորները՝ համառիշտեւրից ու կոզակներից...։ Յաւալի է, այդ շա՛տ ցաւալի, մանուաղ հայ կեանքի ներկայ կրկնական բռնութեամբ, երբ մենք աւելի քան երեք պէտք ունինք միանգամ ընդ միշտ վե՛տլ տալու ամբողջ ազգի ճակատագրին հետ խաղցող այդ ոճրագործների կորստաբեր ընթացքին։

Հնչակեան կուսակցութեան ղեկավար մարմինները քանիցս դիմեցին դաշնակցութեան բերօղբներին, առաջադրելով նրանց ազգու միջոցներ ձեռք առնել զսպելու համար յեղափոխութեան նախատեղի եղող այդ բաշխպօղբութիւնները։ Միւս կողմից կողմից էլ շարունակ համբաւախութիւն քարոզեցին հնչակեան զինուորներին որոնք ամենայն պարտաճանաչութեամբ լսեցին իրենց պետերի հրահանգներին։ Բայց հնչակեան գիտակից զինուորների ազնիւ վերաբերմունքը Դաշնակցական համախոյնների հետ՝ ոչ մի դրական օգուտ չունեցաւ։ Ատելութիւնից կուրացած անոնք ազնուութիւնից սչինչ չհասկացան։ Նրանք հնչակեանների արիւնը արիւնով չլաւալով մեծ սկսբունքը եւ ասպետական վեհանաճութիւնը վերագրեցին անկարողութեան ու վախկոտութեան, եւ միեւնոյն ժամանակ իրենց չէֆէրից անպատճառ մնալով խախտուած շատ ունակում են իրենց արիւնոտ գործը։

Սակայն դաշնակցական յօջախ զինուորները չարաչար սխալուած են կարծելով թէ հնչակեանները անկարող են զէնք գործածելու եւ վախենում են դաշնակցութեան ?) անյաղթ բանակից։ Թող լաւ գիտենան անոնք թէ հարկաւոր մատնիչների, դաւաճանների ու Գօլիթինի պէս մի շարք հայակեր հրէաների պիղծ կեանքին վերջ տուող հնչակեան զինուորը կարող է մի օր, երբ համբերութեան բաժակը կլեցուի դուրս

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

ԱԽԱՅԱԿԱՊԵՏԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ



ՆԱԽԱՂԱՏԸ

(Շար. նախորդ թիւէն)

Անծանօթ մարդը. այդ կարծեցեալ իսլամի ֆաթիւրը, ա՛յլ չը խօսեցաւ։ Յայտնի կ'երեւար որ ներքին վրդով մը կը շարժուէր դիմք. յայտնի կ'երեւար որ անզուսպ դառնութիւն մը կը լեցունէր իր հոգին։ Մէկ խօսքով յայտնի կ'երեւար որ կը տառապէր՝ վրէժխնդրութիւնով մը համակուած։

— Սն չէ՛, բարեկամս, յարեց թուրքը՝ խօսքը բոլորովին փոխելով. առաջին անգամնէ որ այս կողմերը կուգաս։

— Այո՛... գրէ թէ առաջին անգամնէ

որ այս կողմերը կուգամ, պատասխանեց անծանօթ մարդը։

— Բնիկ ո՞ր երկրացի ես։

— Հնդկաստանցի։

— Օ՛, շատ հեռու տեղէ մը կուգաս եղբւր։ Աս որչա՛փ ճամբայ գտած ես մինչեւ հոս հասնիլդ... չիտակը, սոսկում կուտայ ինծի։ Անկից ուղղակի՞ եկար։

— Ո՛չ... ամիսի մը չափ Պարսկաստանի քաղաքներու մէջ թափառեցայ։

— Պարսկաստանը չ'եմ տեսած, արդեօք գեղեցիկ տեղեր ունի՞ր։

— Բնութիւնը ամեն երկրի մէջ գեղեցիկ է, պէյ էֆէնտի՛, մինակ թէ ժողովուրդը նկատի առնելու է։

— Կրտսէ թէ պարսկի՞ ժողովուրդը շատ յետադէմ վիճակի մէջ է. ճշմարիտ է։

— Մինչեւ հիմակ անցած երկիրներու ժողովուրդները տարբեր վիճակի մը չ'ունին։

— Դեղեցիկ քաղաքներ կ'ան Պարսկաստանի մէջ։

— Կան...

— Մզկիթներ։

— Այո՛։

— Աղքատաւէ՞ր է ժողովուրդը։

— Ամեն տեղ։

— Ուրախեմ... Իսլամի պարտականութիւննէ աղքատը սիրել ու ձեռքէն եկածը չը խնայել անոր օգնութեան համար։

Երկար ատեն խօսելէ ետքը, մեծափոր թուրքը խնդրեց որ անծանօթ մարդը պարտէզն իջնէր իրեն հետ, որուն տարածութիւնը մինչեւ ծովը կը հասնէր։

— Կը փափաքե՛մ... մըմիջեց անծանօթ մարդը։

Ու թուրքին հետեւելով տունին ետին գտնուող պարտէզը մտաւ։

Հինաւուրց ծառերով շրջապատուած, ընդարձակ ու հիշատալի էր պարտէզին տեսարանը։ Մէկ կողմը ալիք, մէկ կողմը՝ պողպատեւ ծառեր ու բանջարեղէնի աճուններ, իսկ միւս կողմը ցորենի արտեր կ'երեւային։ Մէջտեղէն լայն ու աւաղով ծածկուած ուղի մը կար, որուն երկու ծովերը նօճիի եղեւնիի՛ հացի, բուրդի, ուռենի եւ ուրիշ ծառեր տնկուած էին։ Այդ գեղեցիկ ծառուղին կ'երկնար մինչեւ ծովը, ուր տախտակէ բայց ամուր կեր-

պով կառուցուած նաւամատոյց մը կը գտնուէր։

— Հիմակ աս ծառուղիէն անցնելով նաւամատոյցը պիտի երթամք, նկատել տուաւ թուրքը։ Թէ որ նաւարարնիս հոն է, կը նստինք նաւը եւ ծովուն վրայ քիչ մ'ատեն կը չրջագայինք։ Կը սիրեմ ծովը։

— Ես, թո՛ղ միջ անծանօթ մարդը։

— Այո՛ դուն։

— Իրաւ որ աշխարհքիս մէջ ամենէ՛ սիրած տեսարանս ծովնէ... ինչպէ՛ս չը սիրեմ։

— Լաւ ուրե՛մն. հիմակ փափաքը կը լեցունեմ, բարեկամս, ըսաւ մեծափոր թուրքն ու սկսաւ արագ արագ յառաջանալ։

Մեծ եղաւ ուրախութիւնը, երբ հեռուէն նաւին կայմերը նշմարեց։ Հեռաւարտ բարձր ձայնով մը մըմիջեց.

— Նաւակը հո՛ն է...։

Արդարեւ, նաւակը խառնաւած էր ծովուն բաց տեղը. իսկ նաւավարը քնացած էր ու կը խնկար։

— Մի՛րէ՛, ձայնեց թուրքը խորտա ու հրամայական ձայնով մը։

Նա ավարը, որու Մի՛րէ՛ անուն

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

Տէր եղնիկ եպ. Ապահունի Ե-
գիպոսէն էլ միաժին երթալու
համար, ուստի հիւպատոսը նա-
խարարութենէն թոյլտուութիւն
չստացած անցագիրը կնքել չէր
ուղած. այս անգամ «Կվակաս
թերթէն կիմանանք թէ Ռուսիոյ
ներքին գործոց նախարարու-
թիւնը արտօներ է նորին Գերա-
պատուութեան Ռուսիա մուտքը»:

— Արտասահման բնակող բա-
րեսէր հայ մը Գահիրէի մէջ
կազմուած Հ. Բ. Բ. Միութեան
ամսական կարեւոր նպաստ մը
յատկացնելէ զատ՝ 40,000 շըշ-
մուտքի տուրք վճարեր է:

— Տ. Պետրոս կարապետեան
որ 7 տարիէ ի վեր տարեկան 30
անգլ. ոսկի կուտայ Ձմիւռնիոյ
հայ սրբանոցին, այս անգամ ալ
իր ծախքով կրթութեւն համար
Գահիրէէն 4 աղքատիկ աշակերտ
ղլկեր է Վերնետիկի Մուրատ-Ռա-
փայելեան վարժարանն, ուր ար-
դէն ունի ուրիշ 4 պաշտպանեալ-
ներ:

— Կովկասի ձիւնաշիր, Արէշ
Ղալախ եւայլ գաւառներուն մէջ
սովի վտանգ կը տիրէ որովհետեւ
խուսուրթեանց պարճառու վար-
ուցանք չեն կարողացած ընել:

— Շուշիէ յուլիս 26 ին հեռա-
գրածեն «Այժմ քաղաքը խաղաղէ
թղթատարը չըզար, և մենք
չենք գիտեր թէ գութի աշխարհ-
հը ինչ կը կատարուի. Ձորքերէն
վերաւորուծ են 9 և սպաննուած
3 հոգի. Ձանգեղուրի գաւառէն
տեղեկութիւններ հասան թէ հոն
ծանր ընդհարումներ կըլլան,
բայց մանրամասնութիւն չկայ»:

— Գարսի բանտին մահմետա-
կանները 100 հոգիի չափ դաշոյն-
ներ գաղտնի բերել տալով ուզեր
են բանտարկեալ 10-15 հայերը
կոտորել բարեբաղտաբար բանտա-
պետ Ե. սէրկէնովը ժամանակին
իմանալով մահմետականները զի-
նաթափ ըրեր և ազատեր է խեղճ
Հայերը:

— Նոր Պայազիտի գաւառին
մէջ թուրք խուճերու և խաղախ-
ներու մէջ լուրջ ընդհարումներ
տեղի ունեցած ու քանի մը խա-
ղախներ սպաննուած ըլլալուն առ-
թիւ, կառավարութիւնը խաղախ-
ներու թուոցիկ նոր վաշտեր ու
թնէանթներ զրկած է թուրքե-
րը պատժելու համար, ասոնց կո-
րուստը արդէն բաւական մեծէ
եղեր:

Հ Ր Ա Ի Ե Ր

Աղքատախնամ ընկերութեան Գոր-
ծադիր ժողովը նկատելով որ հակա-
ռակ անցեալ շարժումն ըրած հրա-
ւերին աղքատներու մեծամասնու-
թիւն չը գոյացաւ, հարկ տեսաւ
ներկայիս և կրկին հրաւիրել յարգոյ
բաժանորդները վաղը կիրակէ 6 օգոս-
տամը 2ին աղջկաբարան տեղի ու-

նենալիք ընդհանուր ժողովին:
Սոյն ժողովին ներկայ անդամք մեծա-
մասնութիւն համարելով նոր Գործա-
դիր ժողովոյ ընտրութիւնը պիտի
ունենայ:

Օրակարգ

Համարառութիւն Գործադիր ժո-
ղովոյ եւ ընտրութեան նախ Գործադիր
ժողովոյ:

Իրան գորս. ժողովոյ աղք. ընկ-
վաթարայի: (Կնիք)

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Կէչէն ճուճաւ Սուլթանըն
ճամիէ կիթմէմէսինէ տայիր
Սթանպուլ կաղէթալարը «տօթ-
թօրլարըն թէնպիհի իւզրէ զա-
թը շահանէ սէրայտան ճամիէ
չրգմատը» մանէսինտէ րէսմի
թէպիղղաթ գապուլ իթմիշլեր
իսէտ էպիր աղ սօնրա կէրիշէ ալը-
նարագ օնա տայիր հիշ պիր
իպարէ եազլամասը կաղէթա-
ճըլարա էմր օլընտըղը Աթան
Րուսէն եազըիօր:

Երկուցտան օգոստոս 1տէ վերի-
լէն մալիւմթա ինանմագ լազմ
կելիր իսէ, Սուլթանըն հալի
խաֆիֆլենմիշ պիրագ իշէ պագ-
մըշ վէ պիր աղ տէ սէրայըն
պաղչքսինտէ կէզինմիշ իմիշ:

— Բուժ բաթրիքի պիւթիւն
օրթօտօքս քիլիսէլէրէ սիրքիւլէր
մէքթուպլար Եօլլայուպ, «Պէօյիկ
Իրիսէնին» հուգուգընր Պուկար-
լարա գարըն մուհաֆաղա իթմէք
վէ զապթ իտիլէն քիլիսէ վէ
մէքթէպլէրի կէրի վէրտիրմէք
իշիւն՝ թապիօլտըղլարը տէվլէթ-
լէրին միւտախէլէսինի տալէթ
իթմէլէրինի թալսիրէ իտէյօր:

— Մանասթըրտա Բուժ չէթա-
լարըն թէշքիլինէ մէտիլէտար
օլտըղը սէպէպլէ միթրաթիտիլք-
տէն հիւքիւմէթմէ թարտ ու
թէպիտ օլընան Եօաքիմ րահպի
Պաթրիք պու տէֆա Սինթա աղա
նասպ իթմիշ տիր:

Շու հալտէ Բուժ բաթրիգհանէ-
սի Պուկարլար վէ Ուլահլար իլէ
օլան խուսուլէթի խաֆիֆլէտէ-
ճէք եէրտէ արթըրմայա չալըշիյ-
օր տէմէք տիր, զիրա մէքգուժ
Եօաքիմ րուհիպին թարտը իշուն
Ուլահ վէ Պուկար էնալըրը
չէտիտէն բրթէսթ իթմիշլէր
իտիր:

— Բուժ բաթրիքի էվլէլէրի կիւն
պիւթիւն տէվլէթլէմէ պիր պէյ-
աննամէ տալի Եօլլայուպ, Պուկ-
կարիտա Բուժլարա գարըն օլան
թէճալիւղաթը շիտէտէն բրթ-
թէսթ իթմի:

Տ Ա Խ Ի Լ Ի Է

Տախիլիյէ նազըրը Մ Բէթքով
պիւթիւն օրապիթէլլէրէ պիր
թահիրթաթը ումուժիկէօնտէրուպ
միթինկէր սահմանագրութիւն
ահքեամընճա սէրպէսթ իսէտէ
սոն հաֆթալարտա եազըլան մի-
թինկէրտէ էհալի հէյլէճանա
կէլուպ միւնասիպէթսիզ վէ խա-

րիճէն ալթանա լէքէ կէթիրէն
հարէքէթլէր վուգու պուլմուշ
օլտընտան պու կիպի մինասիպ-
էթսիզլիլէրէ մէյտան վէրիլմէ-
մէսինի վէ շայէթ իլէրիւտէ զու-
հուր իտէճէք օլուր իսէ օրապի-
թէլլէրին մէսուլ թուլուլաճագ-
լարըն իխթար իթմիշ տիր:

— Ահեօլու շէհրինին էքսէր-
իյէթէն եանուպ քիւլ օլմասը Բուժ
էհալինին օրապիթէլլէ իթաթ
իտուպ թէսլիմ օլընմամասըն
սէպէպ կէսթէրիլիյօր. Շէհրին
Բուժլարըն էթրաֆտան քիւլիլէթ-
լիւ Պուկարլար թօրլանուպ մի-
թինք իթմիլլէրի էսնատէ գօր-
գուլարընտան քիլիսէ վէ սալիր
գալի մաէլլէրէ սըղընարագ քէն-
տիլէրինի սիւահ գուվլէթի իլէ
մուհաֆաղա իթմէք իսթմիշլէր:
օրապիթէլ Բուժլարըն պու հա-
լինէ ասըլըք նազըրը իլէ պագուպ
Պուկարտան կէթիրիլմիշ. օլան
ասկէրէ աթէշ իթմիլլէր պու
էսնատէ շէհրին պիր գաշ թարաֆ
լարընտան հարիգ զուհուրի իլէ
զաթէն ախշապ օլան պիւնալարըն
էքսէրիսինի եազմըշ. րէվայէթէ
կէօրէ 400 գատար ինսան թէլլէթ
օլմուշ վէ սալ գալան էհալի տա
ղա գաշմըշ:

— Սօֆիտա վիւքէլա մէճլիսի
Բուժլարա գարըն թէճալիւղաթը
գաթիլէն մէնն իթմէք իշիւն շէ-
տիտ թէտպիրլէր իթմիլաղ օ-
լընմասըն գարարա ալտը. նիւ-
մայիշիլէրէ գարըն ասքէրէ գուր:
չէլէն աթմայա մէղանիլթ վէրտիր
Պուստան վիւքէլա մէճլիսի Ահ-
— Սօֆիտաքի թիւրք գօլի-
սէրինին Բուժլարա օլան թիճ-
ալիւղաթտան տօլայը պուկար
հիւքիւմէթինէ միւրաճաթընա
ճէվապէն, տըլիլիյէ նազըրը
պիլիմ իշէրքի իշլէր իշիւն հիշ
պիր կէօնա միւտախէլէ գապուլ
իտէմէլիլ տէմիշ տիր:

Եօլունըն ֆէլաքէթզատէլէրինէ
100000 ֆր, թախսիս իթմի,
վէ չատըրլար Եօլլանըմասըն
էմր էյլէտիր:

Ր Ո Ւ Ս Ի Ա

Կովկասիանըն պաղը գազալա-
րընտա թաթարլարըն հաշարա-
թընը զապթ իթմէք իշուն հիւ-
քիւմէթ լազմ կէօրիլլէն մահ-
ալլերէ ասքէր վէ թօրլար սէվգ
իտիյօր:

Շուշիտէքի սօն վագալարտա
մալէն էրմէնիլերին զարարը
բէք օլմամըշ տըր ֆագաթ թա-
թար մահալլէսի պիւթիւն եան-
մըշ տըր:

— Բուսիանըն տախիլի վիւլայէթ-
լէրիտէ քէօյլիլլէրին իխթիլալը
տէվամ իթմէքտէ տիր. պիր
չօյ մահէլլէրտէ հիւքիւմէլէ սօն
իխթիլալթտան տօլայը մահ-
պուլարըն ճէպրէն գուրթարմագ
իսթմիշլէր. Խաղախլար աթէշ
իթմիշլէր. չօղլար էօլմիւշ վէ
եարէլէնմիշ տիրլէր:

— Ձրաթ նազըրը պիր նուլթ-
իրատը իլէ՝ չիֆիլք սահպլէրին
էլինտէն թարլալաշընը ճէպրէն
ալմագ միւլքիլիսիզ, տէմիշ, ֆա-
գաթ արապի միւրիյէտէն էհալիյէ
պախ իթմէք, Եախսո թագսիլլէ
րէպէրլէրէ աթըշ էյլէմէք քէօյ-
լիւլերին իգթիլալարընա քիֆայ-
էթ վերեպիլիլլէր տէյուպ, էհա-
լինին հիւքիւմէթէ մուսվէնէթ
իտէճէլիլլէն իւմիւր պէյան իտմիշ
տիր:

— Վարչապատա զապթիյէ վէ
բօլիսլերէ գարըն 20 վուգուլթ
օլմուշ. ժանտարմա գօմանտանը
էօլալիլլէրլիւշ, պիր ասքէր գըշ-
լասը եանմըշ, պօմպալար աթըլ:
մըշ ասքէր աթէշ իթմիշ վէ չօգ
եարէլի տիւլմիւշ տըր:

Թ Ի Ի Ճ Ճ Ա Ր Ի Յ Է

ՎԱՌՆԱ, 3 Յունիս

ՁԱԽԻՐԷ

ՊՈՒՂՏԱՅ	
Վալիս	54-60 լիպ. 8-9
Արապա	52-58 լիպ. 8 50/10. 60
ԱՐԲԱ	
Վալիս 100 քիւ	10. 10/25
Արապա	42-47 լիպ. 6. 16/ 60
ԵՈՒԼԱՅ արապա 33/36 լիպ. Եօգ	
» 100 քիւ	10. 50.11
ՁԱՎՏԱՐ արապա 52/57 լիպ. 7/7. 40	
ՅԱՍՈՒԼԵՍ արապա 100 քիւ 20/22	
ՌԱԲԻՑԱ 100 քիւ — Եօգ	
Արապա 100 քիւ Եօգ	
ՏՍՐԸ արապա	6. 70/7
ԲՕԼՕՁ արապա 55-60 լիպ. Եօգ	
ՄԻՍԻՐ 57-58 լիպ. առապա Եօգ	
» 100 քիւ Եօգ	
Կիւնտէ վալիս Եօգ վէ	70 — 80
արապա կէլմէքտէ. վալիս մուամէ- լէսի նաթօլէօն 20 ֆր. արապա մու- ամէլէսի նաթօլէօն 20. 20	

ՊԱԳԱԼԻՑԷ

Վարնա լիպտարընտա պագգալիյէ մալլէրին պու կիւնքի ֆիլպթը, ալթու ֆրանք իլէ:	
ԳԱՂՎԷ	2.15/ 2.25
Շէֆէր նէմցէ	.83
Շէֆէր քէմմէլ սանտըգ	42
Բիրինձ ձէնօվա չուվալը	42.
» ֆիլպէ »	35
» Ինկիլիզ »	29. 50
Բիգօ» »	49.
ԿԱՁ Սանտըղը	10. 80
ՁԵԹԻՆ եաղը քիւ	80 — 95
ԳՈՒՐՈՒ Իւգիւմ	32
ԵՈՒՄՈՐԹ 100 ատէթի	4. 40

ՕԹԷԼ ՍԱՄՍՈՆ

ԱՂԷՐԱՍՏՐԱՍ

Ճաւի քիպանաի դէն քիւ 18

Տխար Ս. Շէքրեանի վարչութեան
տակ գտնուող այս ծովեղբեայ եւ
օղաւէտ պանդոկը իր մաքրութեամբ
եւ ամեն կատարելութեամբ յանձնա-
րարելի է մէր հայրենակիցներուն: Այ-
ցելուն հոն կը գտնէ նաեւ մաքուր
ճաշարան մը արեւելեան եւ եւրոպական
ճաշակով մաքուր եւ համալիւս կերա-
կուրներով Գիւնբը չափաւոր են:

Одговорникъ А. Курбетианъ

редакцията Д. Тодоровъ С. не—Варна